

Բ Ա Խ Շ Յ

ԱՇԽՐՔՈՒՄՐ

ԽՈՒՍԿԸ ՓՈՒՂՆ Է

(Քիֆիկի բարձրագույն)

№ 3

Խ Ի Շ Ի Գ

Типография „Братство“

1908

891.99

Բ - 21

APM.  
2-678a

891.39

1-21

01 JAN 2009

19 NOV 2011

Բ Ա Խ Շ Օ

804

ԱՇԽՐՔՈՒՄԸ

ԽՈՒՍԿԸ ՓՈՒՂՆ Է

2653

(Քիֆիզի քարտուղ)



Գ Ի Ը Լ Ի Ս  
Типография „Братство“  
1908

12.7.02.2013

МАЛ 10

22277



40498-67

Մէ-մէկ տուտուց մարթիբ էլ կան,  
 վուր հարցնում իս թէ՛ ախպէր, փուղ  
 գուզլիս թէ ջան, կօսէ. փուղ ինչ կօնիմ,  
 ջան ունենամ, դիփ փուղ իմ ու փուղ:

Ձիր գլխի տրաքւիլը գիդենայ. պօլ-  
 կի միկիտան Ս. Պ. . . իչը վուր ջան  
 չունէ, օխտը վէրչոկ քոյ ու քաշն էլ  
 տասչուրս գրւանքայ է, սվ գիդի դուք  
 նրամէն խիստ լաւ իք ապրում, այ. տօ  
 սխմախնիր, դուք մէ շայի չունիք ու  
 վուտով Օրթաճլէմէն մինչկլի վագզալ  
 իք գնում, նա կի մէ գլուխ փայտոնով  
 է ման գալի:

էն թաւուրնիրն էլ գիդիմ, վուր տը-  
 նէմէն վուր ուզում ին բալկոն դուս  
 գան, չուրս մշակ ին կանչում, ճաշին  
 կի չուրս տեսակ խորագ ին ուտում ու  
 ձիգ նման ջանոջւիրը էտ անջաններու  
 մօդ նօքար ին:

Հա, էլ բեսար չանիք ու շասիք թէ  
 խուսկը ջանն է. ասէք խուսկը փուզն

է, փուղը. ջանը փուղի մօդ էրկրոր-  
թական բան է:

Այ թէգուզ անգաճ դրէք մէ քանի  
նմուշնիր ասիմ անջան փուղաւորի ու  
անփուղ ջանովներու վրէն ու դուք էլ  
կու տեսնիք, վուր աշխրքումը խուսկը  
փուղն է...

Փօլովինցկի բուշով գնում իս, տեհ-  
նում իս, մէ բանցր, լղար, ու պատի  
լամփի հանգը քնթով ցիլինդրաւոր  
մարթ, մէ սիրուն, կոխտա, թմփլիկ  
ախչկայ հիդ պադրուչկի արած գալիս  
ին. դուն քիզ ու բիզ, ան կուխկիցտ  
էկօղ համփսոնիտ չիս բոթոնում ու չիս  
ասոնում թէ ափսուս ախչիկ, վուր սրա  
կնիկն է. տեսար, էստի փուղի բան է,  
մարթը հարուստ է էլի, ախչիկը խիզճ,  
ու էտ պրենիկի մարթուն փուղի համա  
է թամահ արի:

Քիչ էլ դեննիս գնում ու ինչ իս  
տեհնում. մէ բաւթառ օխտանասուն  
տարեկան կնիկ, մէ քսանուչուրս տա-  
տեկան աղի հիդ սիլի-բիլի անելով  
բոլթա է տալի. էստի էլ փուղի բան

է. քաւթառը էտ ջահիլ տղին փուղով  
առիլ է:

Փուղաւորը կօնկա նստելու վուխաը  
մէբաշ վուտը սլքում է ու վէր ընդ-  
նում, ձեռաց կօնկէն կաղնեցնում ին,  
խալիսը առաչ է վազում, մէկը ցիլին-  
դրին է սրփում իրա աղլխով, մէկէլը  
շուրիին է թափ տալի. կանդիխտուրն  
էլ վախեցած, թէ «անդ, վունչիչ խօ  
ցաւ չուիք»:

Անփուղ մարթն էլ է վէր ընգնում  
էտ կօնկէմէն, խալիսը ծիծաղում ին,  
կանդիխտուրն էլ վրէն մէ դայիմ բղա-  
ւում «տօ, ախմախ, չիս մուլափ տան,  
վուր կօնկէն կաղնէ»...

Փուղաւոր մարթը Գանովցկիյ բու-  
չէմէն դուս է գալի ու ուզում է Գօ-  
լովինցկիյ բուշով կամանց-կամանց բոլ-  
թա տալով գնայ, մագրամ գօրօցկօյ  
ուպրաւի աղաք դուս է գալի թէ չէ,  
փայտօնչիկնիրը առաչ ին քչում ու,  
«դրաստի, բարին», «պաժալտի, բարին»,  
սա էլ բեդամաղ չէ անում ու մէկն ու  
մէկումը նստում է...

Մէ քեսատ մարթ իրա օղլուչաղի հիդ էրեխէն էլ խտըտած ուզում է գնայ Հաւլաբար անօրանց տուն, էրիվանցկի տափը վուր հասնում է, սրտով փայտօն է ուզում, մագրամ ինչ սնիս, վուր փայտօնչիկին էլ մօղենում է «փայտօն սլաբողնի», «նետ նետ, դանիտ», խեղճ մարթը մուրազը փուրումը չարէն կտրած վուտով է գնում:

Փուղաւուր մարթ իս, մտնում իս պարիկմախար Սիմօնի դուքանը, ուզում իս պալտօտ հանի ու էրեստ վերանիլ տայ, Սիմօնը քիզ տեհնում է թէ չէ, մէկէլ կարճ Սիմօնի հիդ ու աչկերտով վրայ ին ննգնում, պալտօտ հանում, շապետ վիկալնում ու էրեստ վերանելու վուխտն էլ էրկու սհաթ գլխիտ պտըտում...

Մէ քիչ քեսատ մարթ իս, էլի էտ պարիկմախարի մօղ իս գնում, թէ պալտօ ունիս, իս քու ձեռով հանում իս, օչով չէ մօղ գալի, ամենքը բողանում ին. էրեստ վերանելու վուխտն էլ նստում իս թէ չէ, մէկ էլ տեհար

գլխիտ փամփեցին ու ասին՝ «վիկաց, լաւ, պրծանք»:

Քիզամա լաւ կաս ու քիչ էլ դարգիմանդ իս, մտնում իս «Անատօլա» ճաշարանը. ջեր չիս նստի վուր լաքիէքը առաչ ին գալի թէ՛ «ինչ կու կամենաք». դախդար Պօղոսն էլ ձեռաց դրամափոնին է վրայ ննգնում ու քու խաթրու մէ չիքաստա ածում:

Մէ քիչ քեսատ իս, էլի էտ ճաշարանն իս մտնում, ուզում իս կէս պրօցիա բորչ ուտիս, չունքի էրկու շայի փուղ ունիս. մէ սահաթ է նոտած իս, օչով չէ մօղ գալի, չարէտ կտրած՝ ձէն իս տալի, Օվակիմ, Հաջի, Սարքիս, Ակոփ... խան ձեռով իս թղթղկեցնում, խան ոտով, խան տրոստով, մէ-մէ գամ էլ գլուխտ իս ստօլին խփում, վուր անջախ-անջախ էտ լաքիէքին իմաց անում:

Փուղաւուր մարթ իս, թրիատ իս գնում, ձեռաց պալտօէքի դարաւուր պարտօտ հանում է, տրօստիտ ձեռնէ-մէտ առնում ու կալօչնիրտ քաշում:

Անփուղ մարթ իս, մէ բիլէթ իս ճանգի ու դուն էլ իս էտ թրիատորը գնում, քու ձեռով քու պալտօն հանում իս ու տալիս իս էտ պալտօեթի ղարաւուլին, սա մէ վերստի վրէն ղը պրտում է ու վրէտ էլ բղաւում «չիս տեհնում վուր աիղ չկայ»։ չարէտ կտրած, պալտօս վիր իս կալնում, նուր մեկանց հաքնում, մտնում իս թրիատորը պալոյով նստում, քրդնում, գուս գալի, մրսում ու հիւանդանում։

Յիլինդրի ունիս ծածկած, գնում իս թամամշովի քարւասլէն, ուզում իս մէ գալուստիկ առնի, քու ճանանչ բանցր նազարէմէն ան Մինաստփանց Բագրատէմէն, մագրամ մինչկի դրանց կուշտը կեհաս, դէսից-դէնից կանչում ին՝ «գասպաղին, շտօ պրիկաթիտէ» ու ամեն մէկը ուզում է վուր իրենցմէն առուտուր անիս։

Խիղճ տղայ իս, խունացած չլապկով դուն էլ իս էտ քարւասլէն մտնում, անց իս կենում, օջով ձէն չէ տալի, մէ քանի քորած պրիկաչիկնիր էլ մաս-

խարա ին գցում, ծիծաղելով ու կոտորուելով հարցնում՝ «ի՞նչ գուղիս», Ֆինկաստի, շուրմախտի, այն ցւայն, տրայն... Սուս ու փուս անց իս կենում ու մտնում իս Քալանթարովի մաղաղիէն, Յականանց Կօլէն ու սալգաթութենից գուս արած Եօսինկէն նազինուզով առաչ ին գալի ու էնէնց ին հիդտ ժաթ գալի, վուր ինչ է՝ ջալդով րադ ըլիս, մէբաչ մէ բարիչնա է տուն գալի ու էս ճնգիր» պրիկաչիկնիրը քիզ թողնում ին ու նրա ցիխուտ տուփլիքը հանում, էրկու սահաթ մուլափ իս տալի, վուր նրան ճամփա գցին ու իծում քիզ մտիկ տան։

Մարթ իս սպանում, սուդը վճռում է քիզ մէ քանի տարի Յիմբիր, այնումդ չիս գցում, փուղ ունիս, մէ էրկու լաւ առակառ իս բռնում, լաւ փուղ խոստանում ու Յիմբիրէմէն ագատում։

Չանով մարթ իս, մագրամ անփուղ. Սօլօլակով անց իս կենում, մէբաչ մէ հայաթէմէն մէ շուն է գուս պրծնում

ու վրայ է ննգնում վուր կծէ, դու քու ձեռի ջոխով էտ շանը մէ կամանց խփում իս, շան տէրը դուս է ննգնում, գարադով կանչում, ադրէստ վիկալ-նում, գանգատ անում ու իրա շանը խփելու համա վից ամիս բիրթ նստեցնում:

Հարուստ իս կարանդաչի ծէր սրելիս մէքաչ մատըդ քիչ կտրւում է, ան գլխումտ մազօլ է դուս դալի. մէ դապիսկա իս գրում, բջի ձեռով զրգում ու էրկու-էրկու դօխտուր ապսպրում, դօխտուրնիրն էլ դապիսկէտ վուր կարթում ին ու իմանում, վուր Սօլօլակ իս կենում, ավալ-թափալ վազ ին տալի:

Քեատ մարթ իս, էրեխէտ մէքաչ խիստ հիւանդացաւ, վազ իս տալի դօխտուրների կուշար ու աղաչանք անում, թէ պարուն դօխտուր, էրեխէտ խիստ հիւանդ է ու խնթրում ինք ջափա քաչիք, գաք, մինք էլ միզուգորա ձիր պատիւը կու քաչինք:

— Զահանդամը քու գլուխն էլ ուքու էրէխինն էլ. էս եքա մարթուս վուր

ձիր տուն չը տանիս, էրեխէտ չէիր կանայ էստի բերի... Մէ ուրիշ դօխտուր էլ մահանայ է անում թէ սհաթի վիցն է ու ուշ է, մէ ուրիշն էլ թէ իս Հաւլաբար չիմ կանայ գայ ու թէ խիստ սրտով ուզում իս վուր գամ, գնն ձեռայ Սօլօլակ, ան Միխալովցկի քուչումը օխտը օթախ բունէ իրա կուխնով, էն չախը թէ գուզիս օրական ութը ջեր գամ...

Փուղաուր մարթ իս, չուրս ախչիկ ունիս, չուրխ, կուզիան, ճորփիլիան, լըղար... չուրսին էլ լաւ փուղ ու բաժինք իս տալի ու լաւ-լաւ աղերանց վրայ սաղցնում:

Փեշաբար մարթ իս, սնփուղ, մէ ախչիկ ունիս, բոյով, բուսաթով, կոխտայ, սիրուն ու պետլած, մազրամ ինչ անիս՝ վունց փուղ ունիս, վունց բաժինք ու խիզճ ախչիկա, կանտրաբանտ չայու հանգը մնում է տանը նստած:

Ինչ գլխնիրտ ցաւցնիմ, տեսնում իք, էլի՛, թէ մէ քիչ փուղաուր մեռի է, տէրտէրնիրը ինչ հանգի ին կամանց-

կամանց գնում, տիրացուէքը ինչ ջան-  
ներումը ջան կայ բղաւում ին, համ-  
քարը սուրիողնի է ժաժ գալի, ամեն-  
քը պատիւ ին տալի, ճանանչ-անճա-  
նանչ մօղեհնում ին, շլապկէն վիկալ-  
նում ու կուբօն վիքաշում:

Հիմի խիղճ մեռնին էլ թամաշա ա-  
րէք. ջեր տանը դրած է, մէ քանի  
մարթ դուս է էկի ու սրան-նրան ա-  
ղաչանք ին անում, վուր քոմագ անին  
մեռիլը դուս բերելու. մէ տիրացու  
առաջ ննգած խաչվառը ու փուրվառը  
ձեռին վազ է տալի, սուս ու փուս,  
մէ-մէ գամ էլ թէ ձէն է հանում, էն  
էլ ո՞վ գիդի թէ ի՞նչ է ասում, կուլի  
մեռլին էլ է ուշուց տալի. տէրտէրն  
էլ էդնէն ննգած չալիչ է գալի վուր  
տիրացուին հասնի, կօսիս գրազ ին  
էկի ու տիրացուն ասիլ է, թէ, տէր-  
տէր ջան, արա թէ կանաս հասի ու  
ինձ բռնի. էն մէ քանի մօղարած  
մարթիքն էլ ծիծաղելով ու մասխարա  
զցելով, մէ-մէ գամ էլ տէրտէրին չա-  
րացնելով վազում ին, ձեռաց թաղում

ու ուշունց տալով յիդ ին գալի, վուր  
քէլէխ չունէ որ իրանք իրանց փուրով  
պիտին օղորմաթաս խմի:

էտունք ի՞նչ կօնիք. փուրով ու դար-  
դիմանդ տղա իս, ամենքը չալիչ ին  
գալի վուր հիդտ ծանօթանան. ծանօ-  
թանում ին, քու արևով ին օրթում  
ուտում, քիզ խիստ շատ ին սիրում,  
վա, քու խաթրու գլխնիլը յիդ դրած  
ունին, հ՛ը, թէ օքմին բէդամաղ անէ,  
իմաց արա, մէ լաւ կու դնքսին, վա,  
վա շուրտ կիխտուտից, արա ձեռաց  
աղլխնիլը հանում ին, շուրիդ սրփում,  
հաջան, հա քեմատաղ, դիվ հիդտ ջա-  
նով ու քեմատաղով ին խօսում. հար-  
ցնում իս՝ տղերք, մածունը սիվ է, չէ.  
վա, մաշ-մաշ սիվ է, բաս ի՞նչ է, ջու-  
ղաք ին տալի. շատ էլ գիդին վուր  
սիվ մածուն չի ըլի, ու էտենցութե-  
նով արունտ ծծում ին, կօտր գցում,  
հիմի իրանց հանգը բոստա իս ու էտ  
հիդտ ջանով խսօղնիլը հիմի էսէնց  
ին խօսում՝ ո՞վ, ի՞փ, դու ո՞վ իս, քիզ  
չինք ճանչնում, արա մինք բու փուրի

համը ի՞՜փ ինք տեհի, ան թէ չէ դուն  
փուղ ի՞փ ունէիր, խօս չիս գփւի, գնն,  
գնն անպէր, դու ո՞վ, մինք ո՞վ, սար-  
սաղ խօ չիս. հիմի հարցնում իս՝ տը-  
ղերք, մածունը սիպտակ է, չէ... Վն,  
դու թամամ տուտուց իս էլի, տօ ան-  
մախ, սիպտակ մածուն կուլի՞, ու վիրչն  
էլ ասում ին՝ գնն, քու հէրնէլ անիծած:

Աբա մէ տիղ ասէք, վուր անփուղ  
մարթը պատիւ ունենայ. կոյ էնթա-  
ւուր մէ տիղ...

— Ժամումը...

— Ի՞նչ. ժամումը չէ, վուր մէ-մէ գամ,  
ի՞փ վուր պրաղնիկ է ու պօղնի զբօր է  
ըլում, փուղաւուր մարթը գնում է ու  
արխէյին խալւաթ տէրտէրներու կուխ-  
քին կաղնում. աբա մէ անփուղ մարթ  
էլ գնայ ու էտ տէրտէրներու կուխքին  
կաղնէ, տիս վննց ին դուս անում ու  
ասում՝ սօ, յիմար, սա քու տիղն է,  
չիս գիգի՞ վուր էստի մենակ տէրտէր-  
ները պիտին կաղնի, դուն էլ մէ թէ  
կանաս ջուղաբ տու ու ասա—բաս էտ  
ցիլինդրաւուրը ինչի՞ է կաղնած, դա

էլ խօ տէրտէր չէ, տիս վննց ին ձէ-  
նըդ կտրիլ տալի՝ սուս, սուս, սա քու  
թայի մարթ է, սօ անմախ:

— Պօլիցումը...

— Տօ, պօլիցումը չէ, վուր իրիք սա-  
հաթ բաշպորթը տնտղում ին, տես-  
նում ին վուր քունն է, մագրամ էլի  
զարաշտակէն ին գցում աբա փուղ ու-  
նենաս, մէ իբմին սիվցնիս ակալոչնի-  
կին, տիս ինչ սիլի-բիլի անելով ին  
ճամփայ գցում:

Ասէք, աբա ասէք, էլի. ասէք էլի մէ  
տիղ, վուր անփուղ մարթը խողումը  
ըլի:

Գուլանումը ման իս գալի, գիգին,  
էլի՛, վուր հարուստի վուրթի իս, գէ-  
սից-դէնից համեցէք ին անում, ծաղիկ  
ին թաւազա անում. դուն էլ փքւած  
մօղէնում իս, լատարիի չարխին, ըլմա  
բիլէթ հանում, քսանուհինգանուց հա-  
նում, խուրդէն էլ չիս վիկալնում,  
լատարիի դախլգար ախչկիրքն էլ վոէտ  
կոնֆէտի ին ածում, գլուխտ իղում,  
ինչքան էլ բէսփասոն ըլիս, թէգուղ

բազմաբանի գլուխ ունենաս, մակա-  
րոնի վուտներ, ու վերմիշելի կունիր,  
էլի ասում ին՝ «ախ, վի կակոյ սիմպա-  
տիշնիյ, վի կակոյ կրանսիվի:

Էստունը խօ իմացաք, էլ օրէսի դէ-  
նը չասիք թէ խուսկը ջանն է. հիմի խօ  
իմացաք, վուր խուսկը փուղն է:

Ու էս նմուշները թէ քիչ ին, տէլե-  
փոնով իմաց արէք, էնքամ նմուշիր  
ասիմ անջան փուղաւուրի ու անփուղ  
ջանաւուրի վրէն, վուր ո՛վ գիդէ շըշ-  
կըւիբ:



<< Ազգային գրադարան



NL0321913

23277

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.